



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8044

Բ) Կ Կ Կ-Ի ՅԵՎ Կ Կ Յ-Ի

2-րդ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱԶԵԿԵՐԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՈՒՍՏՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ
1932

ՅԿՈՁ(47.925)
Z-24.

С К
А 538

24 SEP 2006

3KM2(47.925)

14 NOV 2009

Σ 24

Հ Կ (Բ) Կ Կ Կ-ի ՅԵԿ Կ Կ Հ-ի
2-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

ՀԱՅԿ
ԱՄԵՐԻԿԱ
1955-1970
ՀԱՅԿ ԿԱՌԱՐԱԿՈՒՄ



ՀԵՐԻՑ-ԲԵ

17 SEP 2013

8094

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ
ՅԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ-ԲՍՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՍՍԻՆ

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի և ԿՎՀ-ի միացյալ պլե-
նումն արձանագրում է, Վոր ՀամԿ(բ)Կ-ի Կենտկոմի 1931 թ.
հոկտ. 31-ի վորոշումից և Հայաստանի Կոմկուսի Ց-րդ հա-
մագումարից հետո, Հայաստանի Կոմկուսի կազմակերպու-
թյունները վորոշ հաջողություններ են ձեռք բերել կուսակ-
ցական աշխատանքի ասպարեկում:

Այդ նվաճումներն արտահայտվեցին կուսակցական
չարքերի թե՛ քանակական և թե՛ վորակական աճմամբ:

1931 թ. ընթացքում կուսակազմակերպությունն աճեց
6.201 հոգով, իսկ 1932 թ. առաջին յեռամսյակում՝ 1.152
հոգով:

ՀԿ(բ)Կ-ի Կենտկոմի կիրառած ձեռնարկումները նկատե-
լիորեն աշխուժացրին կուսակցական-կազմակերպչական,
դաստիարակչական և մասսայական-քաղաքական աշխատան-
քը: Ետո կազմակերպություններ (Լենինական, Ալլահվերդի,
Յերևան, Արթիկ և այլն), զգալի չափով դարձրին իրենց յե-
րեսը դեպի կուսակցական-մասսայական աշխատանքը: Հիմ-
նականում ավարտվեց ցեխերում, բրիգադներում, հերթա-
փոխություններում և այլն, ստորին կուսողակը ձևակերպելու
աշխատանքը: (1931 թ. հոկտեմբերի մեկին Հայաստանի
արդյունաբերական ձեռնարկություններում, արանսպորտում
և շինարարության մեջ կար 193 ըջիջ, 438 կուսակազմակեր-
պիչ և կուս. խմբակ, ներկայումս կա 273 ըջիջ, 479 կուս-
խմբակ և 859 կուսակազմակերպիչ): Կուսակցական կազմակեր-
պություններն սկսեցին ավելի շատ զբաղվել կուսակցական



56619-66



ուժերի բաշխման հարցերով, արտադրութեան մեջ կոմունիստները կատարած արտադրական գերի ստուգմամբ և կուսակցական որվա նախապատրաստմամբ: Հիմնականում ուղղվել են գյուղում կուսաշխատանքի հենակետներ կազմակերպելու ասպարիզում կատարած սխալները, վերակառուցվել են գյուղական բջիջներն ըստ արտադրական սկզբունքի և ընդարձակվել և կոլտնտեսական բջիջների ցանցը: Մենք ունենք 45 հենակետային բջիջ, 360 կոլտնտեսական բջիջ, 35 խորհատնտեսական, և ՄՏԿ-ներում 7-ը բջիջ՝ 404 կուսխմբակներով և 1.653 կուսկազմակերպիչներով: Շատ կազմակերպություններում սկսել են ավելի մեծ ուղադրություն նվիրել բջիջների, կուսխմբակների, կուսկազմակերպիչների հրահանգմանը, հրավիրելով հատուկ խորհրդակցություններ, համաժողովներ, կոնֆերանսներ և այլն (Լենինական, Յերևան, Ալլահվերդի, Ղազիան և այլն): Վերջին յերեք ամիսներում կուսակցություններում ձեռնարկված թիվերն ու գյուղերն և ուղարկել 59 կուսխմբակներ, վորոնցից 36-ը կուսակցական-մասսայական սխառանքն ուժեղացնելու, 9 կուսխմբակ՝ կուսակցական արքերի մարքսիստական-լենինյան դաստիարակություն տալու գործին ոգնելու համար:

Վերջին շրջանում վորոշ համար ուժեղացել և թե՛ քաղաքում և թե՛ գյուղում կուսակցություն անդամներին և թեկնածուներին մարքսիստական-լենինյան դաստիարակություն տալու աշխատանքը, կուսակցական ակտիվի նախապատրաստումն ու վերապատրաստումը (Հայաստանում գոյություն ունեն 388 կուս. դպրոց և խմբակ՝ 12.798 ունկնդիրներով, 2 կոմունիստական համալսարան՝ 180 ունկնդիրներով, 4 շրջանային կուսդպրոց՝ 353 ունկնդիրներով, Ծաղկաձորի դասընթացները՝ 306 ունկնդիրներով: Միամսյա դասընթացներն են ավարտել 9-ը շրջանում, 275 գյուղբջիջների քարտուղարներ և 3-որյա սեմինար են անցել Լենինականի, Յերևանի, Ալլահվերդու և այլ արտադրական բջիջների կուսկազմակերպիչներն ու կուսակցական խմբակների կազմակերպիչները):

ՀամԿ(բ)Կ-ի կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումները իրականացման հիման վրա, կուսկազմակերպություններն սկսել են աշխատել ավելի լավ, և ել ավելի ամրացրին իրենց կաղը մասսաների հետ: ՀԿ(բ)Կ-ի 8-րդ համագումարից հետո անցած ժամանակաշրջանը բնորոշվում է նրանով, վոր ուժեղացել և կուսկազմակերպությունների սպաքարն իրենց շարքերի միասնություն և համախմբվածություն համար կուսակցություն հիմնական գծի շուրջը, մասնավոր գյուղացիական հարցում կատարված սխալներն ուղղելու համար, ուժեղացել և սպաքարն առանձին բջիջները իդոլոգիական անկախություն և հակակուսակցական վարքագծի դեմ, ուժեղացել և կուսակցական կարգապահություն համար մղվող սպաքարը:

Վերահիշյալ նվաճումների հետ միասին, կուսկազմակերպությունների աշխատանքում միջնա և սթիմ ել կան խոչորագույն թերություններ, վորոնցից հիմնականները ՀԿ(բ)Կ-ի կենտկոմի և ԿՎՀ-ի պլենումը համարում է հետևյալները.

1. Մի շարք կազմակերպություններում դեռևս շարունակում են թերագնահատել անմիջական կուսակցական աշխատանքը (Ղուրդուղուլի, Ղամարու, Բասարդեշար, Մեղրի, Աղբաբա), դանդաղ և վերակառուցման տեմպը, բավականաչափ ուղադրություն չեն նվիրում աշխատանքի վորակին ու բովանդակությունը, թերագնահատում են միջին և ստորին կուսողակի ամրացման կարևորագույն նշանակությունը:

2. Բջիջներն իրենց աշխատանքով դեպևս չեն ընդգրկում բոլոր բանվորներին, իսկ կուսկազմակերպություն մեջ՝ բոլոր կոմունիստներին, մասնավորապես բավականաչափ աշխատանք չեն կատարում՝ բարձրացնելու արտադրությունը յեկած նոր բանվորների կուստուրական ու քաղաքական մակարդակը:

3. Շատ բջիջների աշխատանքում դոյություն ունեն միայն ընթացիկ տնտեսական աշխատանքներով զբաղվելու և վարչություններ իրենցով փոխարինելու յերևույթներ (Մեքե-

նա-Տրակտորային կայաններում, խորհրդային տրանսպորտում և այլն) :

4. Մինչև այժմ անբավարար վիճակի մեջ են գտնվում կուսակցական որվա նախապատրաստման աշխատանքը, կուսպարտականութիւնները բաշխումը, կուսակցութեան թեկնածուները և ղեկավարների մեջ կատարվող աշխատանքը, բանվորներին հետաքրքրող սուր հարցերի շուրջը տարվող մասսայական բացատրական աշխատանքը :

5. Մինչև այժմ ել միանգամայն անբավարար է կոմունիստների, մանավանդ գյուղական կազմակերպութիւնները ընդգրկումը կուսուսավորութեան ցանցում, դեռևս չի իրացվել ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումը՝ կուսուսմամբ ամբողջ գյուղական կազմակերպութեանն ընդգրկելու մասին : Քիչ ոգնութիւն է ցույց տրվում բանվոր պրոպագանդիստին, ցածր է մարքսիստական-լենինյան պրոպագանդի վորակը, չկան հերթափոխութեան դպրոցներ և խմբակներ, ժամանակին թարմ դրականութիւն չի հայթայթվում ստորին ողսկին, թույլ հիմքերի վրա յե դրված անհատական և խմբակային ազխտացիայի կազմակերպումը :

6. Գյուղը մինչև այժմ ել մնում է վորպես կուսակցական աշխատանքի ամենաթույլ բնագավառը : Գեռևս նկատվում են հակակուսակցական ղեկերի վրա գլորվելու, բլիշները խորթ տարբերով խճողված լինելու և ինքնաքննադատութիւնը ճնշելու առանձին վաստեր գյուղական կազմակերպութիւններում (Ախտայի շրջան), չափազանց թույլ և չբավոր ու մեջակ գյուղացիական մասսաների մեջ կատարվող աշխատանքը :

Վերոհիշյալի հիման վրա, Կենտկոմի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը գտնում է, վոր կուսաշխատանքի վիճակը դեռ հեռու յե մեր զարգացման ներկա շրջանի պահանջներին համապատասխանելուց :

Մեր զարգացման ներկա շրջանը պահանջում է կուսակցական կազմակերպութիւնները ավելի մեծ համախմբութիւններ և կոփվածութիւն այն պայքարում, վոր մղվում

է կուսակցութեան հիմնական զծի համար, տվյալ ետապի շլիքայնոր վտանգ աջ թեքման, ինչպես և «ձախ» խոտորումները և նրանց հանդեպ ցուցաբերվող հաշտվողականութեան դեմ, ներկայած լիբերալիզմի, մեծապետական շովինիզմի ու տեղական նացիոնալիզմի դեմ :

Կուսակցական-կազմակերպչական-դաստիարակչական և մասուսյազան-քաղաքական աշխատանքը պատշաճ բարձրութեան վրա դեներու նոյատուկով, Կենտկոմի և ԿՎՀ-ի պլենումը վորոշում են :

1. Քնկեր Ստալինի պատմական վեց պաթանները և ՀամԿ(բ)Կ-ի Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի վորոշումները դործնականորեն մինչև վերջը իրականացնելու խնդիրը պետք է գտնվի Հայոստանի բոլոր կուսկազմակերպութիւնների ուշադրութեան կենտրոնում : Անհրաժեշտ է վերակառուցել և ծովալի կուսակցական-մասսայական աշխատանքն աչնպես, վոր հնարավոր լինի քաղաքական աղղեցութեամբ և բայլչեիկյան ներդործմամբ ընդգրկել բոլոր բանվորներին : Անհրաժեշտ է աշխուժացնելով բանվորների և կոլտնտեսականների ամենալայն խավերի մեջ կուսկազմակերպութիւնների աշխատանքը, բարձրացնել նրանց մարտունակութիւնը, ասպարեզ բանալ նրանց արտադրական ու քաղաքական ակտիվութեան համար : Հսկայական նշանակութիւն է ստանում կուսակցութեան յուրաքանչյուր անդամի և մանավանդ թեկնածուի հետ կատարվող աշխատանքը : Կուսակցական որդաններն անպայման պետք է ճանաչեն տվյալ կուսկոլեկտիվի յուրաքանչյուր անդամին, պետք է ճիշտ կազմակերպեն կուսակցութեան անդամի, մանավանդ թեկնածուի քաղաքական մակարդակի բարձրացման դործը ճիշտ բաշխելով կուսակցական պարտականութիւնները, ոգնեն յուրաքանչյուր առանձին կոմսենխատի՝ հետագա բայլչեիկացմանը, միջոցներ ձեռք առնելով, վոր կուսակցութեան յուրաքանչյուր անդամը կամ թեկնածուն, յուրացնելով կուսակցութեան քաղաքականութիւնն ու նրա ձեռնարկումները, առաջավոր և որինակելի լինի արտադրութեան մեջ և հասարակական ու քաղաքական

կյանքում : Անհրաժեշտ է շարունակել արտադրութեան մեջ և հասարակական-քաղաքական կյանքում կոմունիստների կատարած ավանդաբաշխ ղեկի ստուգումը, սխտեմատիկ բնույթ տալով այդ աշխատանքին :

2. Անհրաժեշտ է առավելագույն ուշադրութեամբ նախընտրել ցեխում աշխատանքն աշխուժացնելու գործին, ցեխը ջնջել, նրա բյուրոյի աշխատանքի ամրացմանը, ցեխային ժողովների քուլանդակութեան բարձրացմանը, ցեխը ջնջել ղեկի բարձրացմանը՝ ցեխում կուսակցական-քաղաքական կյանքի ղեկավարման ասպարեկում :

3. Ուժեղացնելով և առաջացնելով կուսակցական ղեկավարութեանը ձեռնարկութեան ու գլուղի կյանքի բոլոր ասպարեկներում, կադակերպելով և դլխավորելով մասսաների պայքարը կուսակցութեան ղեկեկտիվները կատարելու համար, կուսակցական կադակերպութեանները վճռի դեպքում չպետք է փոխարինեն տնտեսավարին, վարչութեանը և գործարկումին : Նրանք չպետք է ծանրաթեռնեն իրենց տնտեսական մանրուքներով և պարտավոր ե ըստ ամենայնի ամրացնել միանձնյա ղեկավարութեանը :

«Կուսը ջնջնեը հանդիսանալով կուսակցութեան հիմքը, մանավանդ ձեռնարկութեաններում, իրենց աշխատանքում պետք է ղեկավարեն ձեռնարկութեան հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքն այնպես, վոր ապահովեն կուսակցութեան հիմնական ղեկեկտիվների կատարումն արհմիութենական ու տնտեսական որդանների կողմից, ընդմիկն առանց խառնվելու գործարկումի ու գլուղեկտորի աշխատանքի մանրամասնութեաններին, մանավանդ վարչութեան ոպերատիվ կարգադրութեաններին» (Համկ(բ)Կ-ի Կենտկոմի 1929 թվի սեպտեմբերի 5-ի գլուղեկտիվից) :

4. Կենտկոմի և ԿԿՀ-ի պլենումը չըջկումների, կուսկոմների և քիջների կարեորագույն խնդիրն է համարում մասսայական ազխտացիան, զարգախարական-քաղաքական աշխատանքն ավելի բարձր աստիճանի հասցնելը :

Դաստիարակել, համողել, կոնկրետ և պարզ ազխտացիա

մղել, համբերութեամբ բացատրել մասսային հուզող հարցերը, մեր միջազգային դրութեանը, մեր աճման դժվարութեանները, ազխտացիա մղել՝ կադակերպելու համար՝ ահա ազխտացիայի այն հիմունքները, վորոնցից յեխնելով պետք է համառ աշխատանք ծավալել մասսաներին սոցիալիստական դաստիարակութեան տարու համար :

Կուսակցութեան ղեկեկտիվների և լողունգների շուրջը կատարվող ամբողջ ազխտացիոն աշխատանքն անհրաժեշտ է կառուցել այնպես, վոր ըստ հնարավորութեան ավելի խորը ծավալել մասսաների մեջ յերկրի և տվյալ ձեռնարկութեան, կոլտնտեսութեան, խորհտնտեսութեան, ՄՏԿ-ի և այլն քաղաքական ու տնտեսական կյանքի կարեորագույն հարցերը, վորպեսզի ազխտմասսայական աշխատանքն ամենալավ ձևով շաղկապված լինի բանվորների կուլտուրական-քաղաքական և նյութական - կենցաղային պահանջների հետ : Անհրաժեշտ է հատուկ ուշադրութեամբ նախընտրել բանվորական ժողովները, միտինգները, պրույցների, թերթերի ընթերցանութեան և այլն յեխնելի նախապատրաստման հարցերին :

Մասսայական ազխտացիայի ամբողջ աշխատանքը բարելավելու նպատակով Կենտրոնական Կոմիտեյի և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի պլենումը հանձնարարում է Կենտրոնական Կոմիտեյի բյուրոյին՝ կոնկրետ ձեռնարկումներ մշակել պատրաստելու և նախապատրաստելու համար ազխտատորներ, պրոպագանդիստներ, բարելավելու ազխտկոլեկտիվների աշխատանքը, ազխտացիայի վորակը և հրատարակելու համարպատասխան դրականութեան :

5. Մահմանված միանական կուսակցական որը պետք է կարեորագույն լծակ դառնա կոմունիստների հեաազա զարգախարական-քաղաքական կոլման գործում : Նա պետք է դառնա ներկուսակցական ղեմոկրատիայի և բայլչեկյան ինքնաքննադատութեան ծավալման կարեորագույն գործոնը : Ուստի անհրաժեշտ է խնամքով կադակերպել և պատրաստել կուսժողովները, ապահովել ղեկուցողների վորակն ու պատ-

րաստութիւնը, վորտեղ ժողովներում քննարկվելիք հարցերը հասցված լինեն սկզբունքային քաղաքական բարձրութեան, վորտեղ ասպանովի կուսակցութեան բոլոր անդամները ու թեկնածուները ակտիվ մասնակցութիւնը հարցերի քննարկմանը :

6. Պլենումը հանձնարարում է Կենտկոմի բյուրոյին և բոլոր շրջկոմներին՝ հատկապէս զբաղվել գյուղի կուսակազմակերպութեան վերակառուցման ու ամբացման հարցով : Ծաղկունքի բջիջի (Ախտա) գործը միանգամ ևս աղբարարում է առանձին բջիջները քայքայման մասին, շատ գյուղերում և առանձին շրջաններում կուսակցութեան դժի խեղաթյուրման փաստերի գոյութեան մասին, վորոնք պահանջում են բարելավել շրջանային ղեկավարութիւնը և հատուկ ուշադրութիւն նվիրել գյուղական կազմակերպութիւններին, պարտավորեցնել արդիւնաբերական ձեռնարկութիւններին և յերկաթուղու կուսակազմակերպութիւններին կոնկրետ ոգնութիւն կազմակերպել գյուղական բջիջներին՝ կուսաշխատանքը վերակառուցելու և ստորին կուսոդակն ամբացնելու գործում : Կուսակցական ուժերը գյուղում ձիւղ բաշխելու և կոլտնտեսութիւններում ստորին կուսոդակ ստեղծելու խնդիրը պետք է կազմի գյուղական կուսակազմակերպութիւնների ուշադրութեան կենտրոնը :

Կուսակցութեան շրջանային կոմիտեներին հատուկ ուշադրութիւն նվիրել խորհանտեսութիւններին և ՄՏԿ-ների կուս բջիջներին աշխատանքին, ամենամոտ ժամանակում ըստ ամենայնի ամբացնել այդ բջիջները, դարձնելով դրանք գյուղի կուսաշխատանքի իրական հենակետները :

Գյուղական կուսակազմակերպութիւններին աշխատանքի հիմնական թերութիւններից մեկն է մնում դեռևս չբավորների, աշխատավոր անհատական գյուղացիների մեջ կատարվող թուլ աշխատանքը և մանավանդ աղբային փոքրամասնութիւնների ու աշխատավոր կանանց մեջ կատարվող կուսակցական-մասսայական աշխատանքը : Պլենումը հանձնարար-

րում է Կենտկոմի բյուրոյին և շրջկոմներին, հատուկ հսկողութեան տակ առնել հիշյալ բնագավառներում գյուղական կուսակազմակերպութիւններին կատարած աշխատանքը : Միաժամանակ պէնտումը հանձնարարում է Կենտկոմի բյուրոյին, ավելի մեծ ուշադրութիւն նվիրել հեռավոր շրջանների գյուղերին՝ ուժեղացնելով Կենտկոմի ապարատի կենդանի կապն ու ղեկավարութիւնը նրանց նկատմամբ :

7. Տվյալ ետապում կուսակազմակերպութեան կարևոր դուշն խնդիրն է խորհրդային առևտրի ծավալումը, բանատակարարման կանոնավորումը : Թե՛ գյուղի և թե՛ քաղաքի կուսակցական կազմակերպութիւնը, մանավանդ առևտրակոոպերատիվ և հայթայթող որգանների կուսակազմակերպութիւնները, պետք է առավելագույն ուշադրութիւն նվիրեն այդ հարցերին : Կենտկոմի և ԿՎՀ-ի պլենումը հանձնարարում է բոլոր քաղկոմներին և շրջկոմներին, ձեռնամուկ լինել ընդարձակելու և ամբացնելու առևտրակոոպերատիվ և հայթայթման սիստեմի կուսակցական կազմակերպութիւնները, վերակառուցել և աշխուժացնել բոլոր ողակների կուսաշխատանքը ներքևից մինչև վերև, ընդունակ դարձնելով նրանց, բայլչեկորեն մարտնչելու կուսակցութեան այն դիրեկտիվների և լոզունգների իրականացման համար, վորոնք վերաբերում են առևտրի ու հայթայթման հարցերին :

8. Ամբողջ կուսակազմակերպութիւնը կուսուսուցման ցանցով ընդգրկելու և այդ ցանցը վճարաբար բարելավելու նպատակով անհրաժեշտ համարել ծավալել սրբապաշտեցիստների պատրաստումն ու վերապատրաստումը, սիստեմատիկաբար ստուգել նրանց աշխատանքը, վճարաբար պայքարել պարագամունքները վիժեցնելու, պարագամունքներին անխնամ պատասխանելու փաստերի դեմ : Բոլոր ձեռնարկութիւններում պարտադիր կարգով կազմակերպել դպրոցներ կուսակցութեան թեկնածուներին համար և անցնել կուսուսուցման շրջանի կազմակերպման ըստ հերթափոխութիւնների :

9. Կուսակցական աշխատանքի վորակը բարձրացնելու

կարևորագույն լծակները մեկը համարել ամենորյա ինֆորմացիան աշխատանքի մասին, մասսաների քաղաքական տրամադրությունների մասին և այլն: Պլենումն առաջարկում է բոլոր շրջկոմներին և քաղկոմներին համապատասխան բարձրություն հասցնել կուսակցական ինֆորմացիայի դրվածքը, վերացնելով ինֆորմացիայի աշխատողների հոսունությունը, ընտրելով այդ աշխատանքի համար կուսակցության քաղաքականապես կայուն և պատրաստված անդամներին: Դրա հետ միասին բջիջներում, ինֆորմացիայի դործին մասնակից դարձնել բանիթղթակիցներին և գյուղթղթակիցներին, ապահովելով շրջկոմի ինֆորմացիոն ապարատի ամենասերտ կապն ու չեկալարությունը նրանց նկատմամբ:

10. Պլենումն առանձնապես դնում է կուսկազմակերպությունների առջև կուսակցության սոցիալական կազմի աճման ու կարգավորման հարցը: Կուսակցական աշխատանքի ճիշտ դրվածքի արդյունքը պետք է լինի կուսկազմակերպության նորմալ, ասոցիալ աճումը, լավագույն առաջավորներով, հարվածայիններով, բանվորներով ու կոլանտեսականներով: Պլենումը հանձնարարում է կենտկոմի բյուրոյին մշակել այնպիսի կոնկրետ ձեռնարկումներ, վորոնք բարելավեն կուսակցության աճման ու կարգավորման ասպարիզում բջիջների կատարած աշխատանքը, մշակել ձեռնարկումներ այդ դործում ինքնահոսը վերացնելու, կուսակցության ռեզերվներն ուսումնասիրելու և կուսակցության մեջ ավելի մեծ թվով գաղղյահի բանվորներ ներգրավելու համար:

11. Պլենումն արձանագրում է, վոր կենտկոմի և շրջանային կոմիտեների կազմ-հրահանգչական բաժինները թույլ են ձեռնարկել կուսկազմերի պրոբլեմի լուծմանը: Կազմերի ուսումնասիրման և ընտրությունների անկանոն վիճակը, դասընթացները ունենալիքների պատահական կազմը, կուս. կազմերի մեծ հոսունությունը շրջկոմներում, քաղկոմներում և խոշոր բջիջներում, վկայում է, վոր շրջկոմներն ու քաղկոմները թեքազնահատում են այդ կարևորագույն աշխատանքը:

Յեղևելով վերահիշյալից կենտկոմի ու կվ.ձ-ի պլենումն առաջարկում է բոլոր շրջկոմներին և քաղկոմներին սրառաճ բարձրություն հասցնել կուսկազմերի ուսումնասիրման ու ընտրությունների դործը, պայքար մղելով հոսունություն դեմ, և ամրացնելու կուսաշխատանքի լավագույն առաջավոր աշխատողների, պատշաճ բարձրություն վրա դնելով ստորին կուս. աշխատողներին ցույց արվող կոնկրետ ոգնությունն ու ղեկավարությունը, բարձրացնելով կուսակցական հրահանգման վորակը, հատուկ ուշադրություն նվիրելով նրանց քաղաքական-քաղաքական մակարդակի բարձրացմանը:

12. Կուսակցության կարևորագույն տնտեսական-քաղաքական խնդիրների հաջող լուծումը պահանջում է ըստ ամենայնի բարելավել կոմյերիտմիությունների ամենորյա կուսակցական ղեկավարումը, կուսակցական կազմակերպությունների կոնկրետ ոգնությունը կոմյերիտմիությունը՝ ուժերի ճիշտ բաշխման, Միությունների քաղաքատիրարակչական աշխատանքի վերակառուցման, արտադրական ու կոլանտեսական յերիտասարդության նոր կազմերի մեջ կատարվող քաղ-դատտիրարակչական աշխատանքի ասպարիզում:

Կուսակցական կոմիտեները պետք է վճռական միջոցներ ձեռք առնեն բարելավելու կոմյերիտմիության կազմը վորակապես և ամրացնելու կուսակցական լավը կոմյերիտմիության մեջ, ծավալելու բանվոր յերիտասարդության մեջ մասնաայական աշխատանքը՝ ինտերնացիոնալիզմի և բայլչեիկյան կուսակցականությունների վորով:

13. Կենտկոմի և կվ.ձ-ի պլենումը անթույլատրելի յի համարում է Վ.ձ-ԲԳՏ-ների մասնաայական աշխատանքի նշանակությունների թեքազնահատումը շրջանային կուսկազմակերպությունների կողմից և առաջարկում է վճռական բեկում ստեղծել Վ.ձ-ԲԳՏ-ների մասնաայական աշխատանքի դրվածքում, նվիրելով գլխավոր ուշադրությունը Վ.ձ-ների արտաշատային աշխատողների ինտերնատտի կազմակերպմանը, Վ.ձ-ԲԳՏ-ների աստրին հենակետներին ոժանդակիչ լամբակն-

րի, սեկցիաների, հսկիչ պոստերի աշխատանքի աշխուժացման վրա :

14. Բոլոր կուսակազմակերպությունները պետք է ուժեղացնեն իրենց ղեկավարությունը՝ պրոֆկազմակերպությունների նկատմամբ՝ ստորին պրոֆկազմակերպությունների աշխատանքի վերակառուցման և ամրացման, նրանց մասսայական աշխատանքի աշխուժացման և արհմիությունների վերջին համագումարի ղեկեկտիվների դործնական կենսագործման ասպարիզում :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԼՆՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՁԻՆՊԼԱՆԻ ԿՍԱՐՄԱՆ ՅԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՄԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅԻ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը գտնում է, վոր Ալլահվերդու և Ղափանի պղնձարդյունաբերության ձեռնարկությունների հինգ ամսում կատարած աշխատանքում զգալի նվաճումներ կան համեմատած անցյալ տարվա հետ :

Հնգամսյա հանդիպական պլանը, վորը յելակետ է ունեցել 4600 տոնն, պղնձի տարեկան հանդիպական պլանը (չհաշված արտացոլիչ հնոցի 400 տոնն արտադրանքը) վորտանակ 4100 տոնն պղնձի հիմնական պլանի, վոր հաստատել է ծանր արդյունաբերության Ժողկոմստը, կատարվել է հանքի հանույթի ասպարիզում 97,3 տոկոսով, վորից Ալլահվերդում 95,7, Ղափանում 104,3 տոկոսով : Սև պղնձի ձուլման հանդիպական պլանը կատարվել է՝ Ալլահվերդում 109,1, իսկ Ղափանում 92,4 տոկոսով : Ընդհանուր առմամբ յերկու ձեռնարկություններում 105,8 տոկոսով :

Համեմատած 1931 թվականի համապատասխան շրջանի հետ, հանքի հանույթի աճումը կազմում է 15,2 տոկոս, սև պղնձինը՝ 48,4 տոկոս :

Դրա հետ միասին վորոշ հաջողություններ են նկատվում արդֆինպլանի վորակական ցուցանիշները կատարման բնագավառում : Համեմատած մեկ բանվորի 1931 թվականի աշխատանքի արտադրողականության հետ, ընթացիկ տարվա առաջին յեռամսյակում աշխատանքի արտադրողականությունը աճում է տվել՝ Ալլահվերդու հանքերում 8 տոկոսով, Շամլուղում՝ 53 տոկոսով և Ղափանում՝ 36,6 տոկոսով :

2. Մասնանշելով այն հաջողությունները, վոր ընթացիկ տարվա հինգ ամսում ձեռք են բերել Հայաստանի պղնձարդյունաբերության ձեռնարկությունները շահագործման բնագավառում, Կենտկոմի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումը ժխ-

ժամանակ արձանագրում է, վոր պղնձարդյունարերության կարեորագույն ճակատամասերը դեռևս գտնվում են անբավարար վիճակում :

Ծնորհիվ յերկրաբանական-հետախուզական ու նախապատրաստական աշխատանքների չափազանց թույլ ղեկավարման, առանձին հանքերում հետախուզական աշխատանքների ուղղորտունխտական թերազնահատման, շնորհիվ յերկրաբանական-հետախուզական աշխատանքների վատ կազմակերպմանը, ինչպես Ալլահվերդում, այնպես էլ Ղափանում, հաշվետու չբժանում հետախուզումների դրաճան արդյունքը չափազանց չնչին է և չի լուծում հումքային բազան ընդարձակելու խնդիրը՝ Հայաստանի պղնձարդյունարերության հետագա ծախարման համար :

Չնայած կենտրոնի մի շարք վարչականներին Զակյվեամեաի, Ալլահվերդու և Ղափանի կոմբինատների ղեկավարությունը և Ալլահվերդու ու Ղափանի չբժանների կուտակիցական ու արհմիութենական կազմակերպությունները մինչև այժմ համապատասխան բեկում չեն ստեղծել այդ աշխատանքում :

Անցած հինգ ամսում նախապատրաստական աշխատանքների պլանը կատարվել է Ալլահվերդում 56,6 տոկոսով, Ղափանում 77 տոկոս : Եւթն չբժանում հետախուզական աշխատանքները Ալլահվերդում կատարվել են 73,9 տոկոսով, Ղափանում՝ 75,3 տոկոսով : Արմաղային փորումն Ալլահվերդում կատարվել է 53,1 տոկոսով, Ղափանում՝ 45,5 տոկոսով :

Ավելի վատ վիճակի մեջ են Անդրկովկասի յերկրաբանական-հետախուզական վարչության Հայաստանի բազայի յերկրաբանական-հետախուզական աշխատանքները (Ոխչի, Ազարակ, Միսիսանա և այլն) :

Բացարձակապես անբավարար վիճակի մեջ է գտնվում հիմնական շինարարությունը. ինչպես և բնակարանային ու կոմունալ շինարարությունը :

Ներկայումս գոյություն ունեցող աշխատանքի տեմպը չի ապահովում Փլոտային դործարանի ու արտադրիչ հնոցի գործարկումը : Կենտրոնի սահմանած ժամկետին : Այդ հան-

գամանքը իրոպես վտանգ է սպառնում 1933 թ. պլանի կատարմանը :

Հիմնական շինարարության առաջին յեռամսյակի պլանը յերկու կոմբինատում կատարվել է 63,3 տոկոսով : Այլիլին և մայիսին այդ պլանը կատարվել է ավելի ցածր տոկոսով : Անթուշլատրելի չափով ձգձգվել է Ղաթարի յերկաթգծի կառուցումը :

Հիմնական աշխատանքների պլանի թերակատարման և հանքերի չահագործման ասպարիզում գոյություն ունեցող թերությունների սրտճառները հետևյալներն են՝

ա) ծանր արդյունարերության ժողովատի Գլավցվեամեադոլոտոն անթուշլատրելի չափով թերազնահատել է Ալլահվերդու ու Ղափանի հանքերի հնարավորությունները և լրիվ չի կատարել գոյություն ունեցող ձեռնարկությունները վերակառուցելու համար նյութեր հայթայթելու և սարքավորման պատվերներ տալու նվազագույն պլանները :

բ) մինչև այժմ գոյություն չեն ունեցել շինարարության խնամքով կազմված և վերջնականապես մշակված նախագծեր .

գ) անբավարար է յեղել տեխնիկական ղեկավարության վերահը և բացակայել է շինանյութերով մանեվրելու կարողությունն, ինչպես և վատ է կազմակերպվել ու խնամվել տրանսպորտը .

դ) չափազանց թույլ են իրականացվել ընկ. Ստալինի վեց պայմանները, մանավանդ հետախուզական ու նախապատրաստական աշխատանքներում, ինչպես և հիմնական շինարարության ասպարիզում : Ծինարարության մեջ բացակայել է տնտեսաշվարկը, չի կանոնավորվել հաշվառումն ու հաշվետվությունը, գոյություն է ունեցել բանութի մեծ հոստունություն, մեքենայացման անբավարար տեմպ և բացահայտ ու վարադուրված գիմարկություն .

ե) բավականաչափ աշխատանք չի կատարվել բանվորների, ինժեներա-տեխնիկական աշխատողների ու ծառայողների մատակարարումը բարելավելու համար, թույլ չափով են մոբիլիզացիայի յենթարկվել տեղական ռեսուրսներն ու

99-61995



հնարավորութիւնները՝ բանվորական սնունդը բարելավելու համար վատ են աշխատել քաղաքամերձ խորհանդեսութիւնները և ընդհատումներ են յիղել կենտրոնական հայթայթող օրգանների կողմից կատարվող մատակարարման ասպարիզում:

զ) կենտրոնական, տնտեսական կազմակերպութիւնները և մանավանդ ծանր արդշտարեքութիւնի ժողովմատի լիազօրն ու Աշխօղկոմատն ամենօրյա պլանաչափ ղեկավարութիւն ու կոնկրետ օգնութիւն չեն ցուցաբերել պղնձարդշտարեքութիւնի աշխատանքի ասպարիզում:

է) բալական չի վերակառուցվել կազմակերպչական, կուսակցական դաստիարակչական և մասսայական-քաղաքական աշխատանքը—Ալլահվերդում ու Ղափանում աշխատանքի բոլոր բնագավառներում ընկ. Ստալինի վեց ցուցումների կատարումն ասպահովելու համար:

Կենտկոմի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումը դանում է, Վոր պղնձարդշտարեքութիւնը վերակառուցելու համար կիրառվող գործնական ձեռնարկումների իրականացման տեմպը չի ասպահովում կարևորագույն տնտեսական-քաղաքական այն խնդիրների կենսագործումը, վորոնք առաջադրել էլին 17-րդ կուսկոնֆերանսը և ՀամԿ(բ)Կ-ի Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի վորոշումները՝ Ղափանի ու Ալլահվերդու հանրերում պղնձի հանույթն ավելացնելու և այդ հանքերը հիմնական վերանորոգման ու վերասարքավորման յենթարկելու մասին:

Յեղներով վերոհիշյալից և գտներով, վոր ջնայած մի շարք գծավարութիւններին, Ալլահվերդու ու Ղափանի կուսակցական ու արհմիութենական կազմակերպութիւնները բայլչելիկյան աշխատանք ծավալելու դեպքում ունեն բոլոր հնարավորութիւնները՝ լրիվ կատարելու թե՛ պղնձի ձուլման հանդիպական պլանը և թե՛ 1932 թվականի հետախուզումների ու հիմնական շինարարութիւնի պլանը, Կենտկոմի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումը վորոշում է՝

1. Հանձնարարել Ալլահվերդու և Ղափանի շրջկոմներին՝ կոմբինատների պրոֆկազմակերպութիւններին և զիրեկտոր-

ներին, յեղներով Կենտկոմի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումի սույն վորոշումից, մշակել և կիրառել կոնկրետ ձեռնարկումներ աշխատանքի յուրաքանչյուր օրյակալի համար առանձին, նպատակ դնելով լրիվ իրականացնել ընկ. Ստալինի վեց ցուցումները բոլոր աշխատանքներում և այդպիսով ասպահովել լի չահագործման և լի հիմնականում շինարարութիւնի բոլոր պլանների պնխախան կատարումը:

2. Առաջարկել Ալլահվերդու կոմբինատին ավարտել կոմբինատի սարքավորումը Ծամբույի հանքերում գործարկելով վերջին ամենաուշը մինչև 1932 թ. սեպտեմբերի մեկը:

Ասպահովել Լենհանքերի Ալլահվերդու հիմնական հետախուզական դարձյների վորումը առնվազն 40 մետր ամսական, սկսած 1932 թ. սոսոտսի մեկից:

Լրիվ սղատգործել գոյութիւն ունեցող դաղդյահները և արմասային վորումից անցնել սուրբողաթներով ու դնդակներով կատարվող վորման, ընդամին միջոցներ ձեռք առնել, վոր յուրաքանչյուր դործող դաղդյահ վորի առնվազն ամսական 75 մետր:

Ղափանում սարքավորել և դործարկել ներմուծված կոմբինատները՝ մեկը Լենիմբում, իսկ մյուսը Ծահումյան հանքերում ամենաուշը մինչև 1932 թ. դեկտեմբերի մեկը:

Ուժեղացնել Ղափանի Լենիմբի հիմնական շտոլնայի վորման տեմպը, նպատակ դնելով անալոյման ավարտել հիշյալ աշխատանքը մինչև 1932 թ. հոկտեմբերի մեկը:

Ավարտել Ծահումյանի հանքերի շտոլնայի նախագծումը և ամենաուշը մինչև սույն թվի հուլիսի 15-ը լուծել հանքը Ծահումյան խմբից գործարանի փոխադրելու հարցը:

3. Առաջարկել կոմբինատներին զիրեկտորներին՝ իրենց անձնական հսկողութիւն տակ առնել յերկրաբանական-հետախուզական աշխատանքները, հատուկ ուշադրութիւն նախընտրելով վորման վորակին՝ պաշար պատրաստելու իմաստով:

Առաջարկել Չակցվեամետին՝ ուժեղացնել ձեռնարկութիւնների յերկրաբանական սղատարկումը, ստեղծելով յերկրաբանական-հետախուզական վորման աշխատանքների հատուկ սեկտոր:

2012-2013



հնարավորութիւնները՝ բանվորական սնունդը բարելավելու համար, վատ են աշխատել քաղաքամերձ խորհանաեսութիւնները և ընդհատումներ են յեղել կենտրոնական հայթաթոյ որդանների կողմից կատարվող մատակարարման ասպարիդում:

դ) կենտրոնական, տնտեսական կազմակերպութիւնները և մանավանդ ծանր արդյունաբերութեան ժողովրդատի լիազորն ու Աշխօղկոմատն ամենուրեւս պլանաչափ ղեկավարութիւնն ու կոնկրետ ողնութիւնն չեն ցուցաբերել պղնձարդյունաբերութեան աշխատանքի ասպարիդում:

է) բավական չի վերականգնուցվել կազմակերպչական, կուսակցական դաստիարակչական և մասսայական-քաղաքական աշխատանքը—Ալլահվերդում ու Ղափանում աշխատանքի բոլոր բնագավառներում ընկ: Ստալինի վեց ցուցումների կատարումն ասպարիդելու համար:

Կենտկոմի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումը դանում է, վոր պղնձարդյունաբերութիւնը վերականգնելու համար կիրառվող գործնական ձեռնարկումների իրականացման տեմպը չի ասպարիդում կարևորագույն տնտեսական-քաղաքական այն խնդիրների կենսագործումը, վորոնք առաջադրել է յին 17-րդ կուսկոնֆերանսը և ՀամԿ(բ)Կ-ի Կենտկոմի 1931 թ, հոկտեմբերի 31-ի վորոշումները՝ Ղափանի ու Ալլահվերդու հանրերում պղնձի հանույթն ավելացնելու և այդ հանքերը հիմնական վերանորոգման ու վերասարքավորման յենթարկելու մասին:

Յենեկով վերոհիշյալից և գտնելով, վոր ջնայած մի շարք գծավարութիւններին, Ալլահվերդու ու Ղափանի կուսակցական ու արհմիութենական կազմակերպութիւնները բայլչեիկյան աշխատանք ծախալելու ղեպըում ունեն բոլոր հնարավորութիւնները՝ լրիվ կատարելու թե՛ պղնձի ձուլման հանդիպական պլանը և թե՛ 1932 թվականի հետախուզումների ու հիմնական շինարարութեան պլանը, Կենտկոմի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումը վորոշում է՝

1. Հանձնարարել Ալլահվերդու և Ղափանի շրջկոմներին՝ կոմբինատների պրոֆկազմակերպութիւններին և զիրկատոր-

ներին, յենեկով Կենտկոմի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումի սույն վորոշումից, մշակել և կիրառել կոնկրետ ձեռնարկումներ աշխատանքի յուրաքանչյուր որչեիկի համար առանձին, նպատակ դնելով լրիվ իրականացնել ընկ: Ստալինի վեց ցումները բոլոր աշխատանքներում և այդպիսով ասպարիդել յեն շահագործման և յեն հիմնականում շինարարութեան բոլոր պլանների պիտանի կատարումը:

2. Առաջարկել Ալլահվերդու կոմբինատին ավարակ կոմպրեսորի սարքավորումը Շամլուցի հանքերում գործարկելով վերջինս ամենաուշը մինչև 1932 թ. սեպտեմբերի մեկը:

Ապահովել Լենհանքերի Ալլահվերդու հիմնական հետախուզական դարոյների վորումը առնվաղն 40 մետր ամսական, սկսած 1932 թ. սոոտասի մեկից:

Լրիվ ողտագործել վոյութիւնն ունեցող դաղդյահները և արմատային վորումից անցնել սուրբողաթներով ու դնդակներով կատարվող վորման, ընդամին միջոցներ ձեռք առնել, վոր յուրաքանչյուր գործող դաղդյահ վորի ստնվաղն ամսական 75 մետր:

Ղափանում սարքավորել և գործարկել ներմուծված կոմպրեսորները՝ մեկը Լենխումում, իսկ մյուսը Շահումյան հանքերում ամենաուշը մինչև 1932 թ. դեկտեմբերի մեկը:

Ուժեղացնել Ղափանի Լենխումի հիմնական շտոյնայի վորման տեմպը, նպատակ դնելով անպայման ավարակ հիշյալ աշխատանքը մինչև 1932 թ. հունվարի մեկը:

Ավարակ Շահումյանի հանքերի շտոյնայի նախագծումը և ամենաուշը մինչև սույն թվի հուլիսի 15-ը լուծել հանքը Շահումյան խմբից գործարան իտաղրելու հարցը:

3. Առաջարկել կոմբինատներին ղերեկտորներին՝ իրենց անձնական հսկողութեան տակ առնել յերկրաբանական-հետախուզական աշխատանքները, հատուկ ուշադրութիւն նախելով վորման վորակին՝ պաշար պատրաստելու իմաստով:

Առաջարկել Չակցվետախին՝ ուժեղացնել ձեռնարկութիւնների յերկրաբանական սպասարկումը, ստեղծելով յերկրաբանական-հետախուզական վորման աշխատանքների հատուկ սեկտոր:

200-200



Միաժամանակ կազմակերպել յերկրարանների պարբերական խորհրդատվութիւնն:

4. Անդրյերկոմի միջոցով պարտավորեցնել Անդրկովկասի յերկրարանական-հետախուզական աշխատանքների վարչութիւնը՝ ծախարել Հայաստանում յերկրարանական-հետախուզական աշխատանքները դունափոր մետաղների աստղըրում, ուժեղացնելով փորման պարկը՝ փորման նոր պայդասներով ու անհրաժեշտ սարքավորումով:

Պարտավորեցնել Չակցվեամետին ավարտել Շամլուղի ու Ախտալայի յենթակայանների ու հաղորդման դժի նախագծերը, մինչև 1932 թ. հուլիսի 5-ը:

Պարտավորեցնել Չակցվեամետին միջոցներ ձեռք առնել Համամիութենական ելեկտրոմիավորումից ստանալու յերկուտրանսֆորմատոր մինչև սեպտեմբերի մեկը Շամլուղի համար և մեկ տրանսֆորմատոր մինչև հոկտեբերի մեկը՝ Ախթալայի համար:

Անդրյերկոմի միջոցով միջնորդութիւն հարուցել ծանրարդյունաբերութիւն ժողկոմատի առջև, վոր վերջինս միջոցներ ձեռք առնի Ղափանի Լենինի յենթակայանի և Շահումյան հանքերի համար ուղարկելու այն տրանսֆորմատորները, վորոնք պատվիրվել էին 1929 թվականին, սակայն պատվերը լուծարքել էր վեճում 1932 թ.: Տրանսֆորմատորները ստանալ այնպիսի հաշվով, վոր հնարավոր լինի սարքավորել դրանք ամենաուշը մինչև սեպտեմբերի մեկը, քանի վոր առանց դրանց չեն կարող դործարկվել ներմուծած կոմպրեսորները:

Չակցվեամետին՝ ապահովել սյուների, մեկուսիչների, մերկաբեղների ստացումը Շամլուղի հաղորդման դժի համար ինչպես և Ալլահվերդու դործարանները տանող հաղորդիչ զիծն ուժեղացնելու համար ստորերկրյա կարելի ստացումը՝ ամենուշը մինչև 1932 թ. հուլիսի 15-ը:

3. ՀամԿ (բ) Կ Անդրյերկոմի միջոցով դիմել ծանրարդյունաբերութիւն ժողկոմատ և Գլավցվեամետ-գորտոյին, վոր նրանք անհապաղ ֆոնց առանձնացնեն Ֆլոտացիոն դործարանների (մեծ ու փորձնական) պակասող սարքավորման

համար, ինչպես և չուտափութ կերպով բաշխելու մինչև այժմ չարտվիրված Ֆլոտացիոն սարքավորման պատվերներն այնպիսի հաշվով, վոր ամբողջ սարքավորումը շինարարութիւն վարը փոխադրվի ամենաուշը մինչև 1932 թ. նոյեմբերի մեկը:

ՀամԿ (բ) Կ Անդրյերկոմի միջոցով պարտավորեցնել Անդրյերկաթուղիների շինարարութիւն վարչութիւնը՝ Ղաթարի յերկաթգծի կառուցումն ավարտել ամենաուշը մինչև 1932 թ. հուլիսի 15-ը:

4. Նոր դործարանի կառուցումն ըստ ամենայնի արագացնելու նպատակով, միջնորդել ՀամԿ (բ) Կ Կենտրոնին, վոր Ալլահվերդու կառուցվող կենտրոնական Անդրկովկասյան պղնձաձուլարանը և Ղափանի Ֆլոտացիոն դործարանը մտցվի հարվածային շինարարութիւնների շարքը:

5. ՀամԿ (բ) Կ Անդրյերկոմի միջոցով միջնորդութիւն հարուցել ծանրարդյունաբերութիւն ժողկոմատի առջև 1932 թ. 4-րդ յեռամսյակում ստանալու 40 տոննանոց կոնվերտոր և բեռնարար մեքենա:

Հաստատելով Ալլահվերդու դործարանի արտացոլիչ ու կոնվերտորային ցեխի դործարկումն անպայման մինչև 1932 թ. սեպտեմբերի 1-ը, այսինքն՝ Գլավցվեամետի հաստատած ժամկետից չորս ամիս առաջ սկսելու մասին յեզամ վորոշումը, վորով հնարավորութիւն է ստեղծվում Ալլահվերդու դործարանների ծրագիրը 4-րդ յեռամսյակում ավելացնել 400 տոնն պղնձով՝ հիմնված գոյութիւն ունեցող հումքի վրա (հանքի մանրուքը և վատերթակետային հնոցը), առաջարկել Ալլահվերդու կոմբինատին, ընկ. Շեստակովի պատասխանատվութիւնը, սահմանված ժամկետին ավարտել կառուցման ու մոնտաժի բոլոր աշխատանքները:

Պարտավորեցնել Չակցվեամետ տրեստի կառավարիչ ընկ. Բալայանին, միջոցներ ձեռք առնել ստանալու պակասող հրակայուն նյութերը և մետաղը՝ նորակառույց դործարանի յերկաթե մասերի համար:

6. Պարտավորեցնել կոմբինատներին, կենսագործել Կենտ

կոմիտեի վորոշումը՝ շինարարությունը հիմնական որչեկաններում կենտրոնացնելու մասին, հաշվի առնելով շինանյութերի և բանուժի գոյություն ունեցող ֆոնդերը, միաժամանակ միջոցներ ձեռք առնելով 1932 թ. ընթացքում լիովին բավարարելու շինանյութերով ու բանուժով նաև շինարարության մյուս որչեկանները:

Հերթականություն սահմանել շինարարության մեջ և Ալլահվերդու պոլիտեխնիկական ու Ղափանի ֆլուտացիոն գործարանը մասնել հարվածային կառուցումների շարքը, ապահովել այդ գործարաններն անհրաժեշտ նյութերով ու բանուժով առջին հերթին:

Հանձնարարել Հայաստանի ԼԿՅՆՄ-ի Կենտկոմին՝ տասնորում կադրակերպել 100 կոմյերիտականներին հավաքագրումը Ալլահվերդու կոմբինատի համար և 100 կոմյերիտականի հավաքագրումը Չանդեղուրի կոմբինատի համար՝ շինարարական պեղոնի ընթացքում աշխատելու նպատակով:

Առաջարկել կոմբինատներին՝ բանուժի հոսունությունը վերացնելու նպատակով, ամենաուշը մինչև հուլիսի մեկը իրականացնել Կենտկոմի դիրեկտիվը գոյություն ունեցող բնակարանային ֆոնդը վերաբաշխելու մասին, նպատակ դնելով ապահովել բնակարանով առաջատար պրոֆեսիոններին կադրերին: Մոտակա յերկու ամսում ավարտել անցյալ տարվանից անավարտ մնացած տների կառուցումը և հանձնել օդապարծման, միաժամանակ ուժեղացնելով բնակարանային նոր շինարարության տեմպն անպայման ավարտելով ցուցակով նախատեսված որչեկանների կառուցումը և հանձնել վերջիններին օդապարծման ամենաուշը 1932 թ. դեկտեմբերի 15-ից վոչ ուշ:

Բացառիկ կարևորություն տալով Ղափանի ու Ալլահվերդու բնակարանային ու կոմունալ շինարարությանը, հանձնարարել փողկոմիտեին՝ տասնորում մշակել կոնկրետ ձեռնարկումներ՝ ոգնելու Ալլահվերդու և Ղափանի կոմբինատներին բանուժով, տրանսպորտով ու տեղական շինանյութով:

վորպեսզի ապահովվի բնակարանային ու կոմունալ շինարարության պլանների կատարումը:

Ուժեղացնել կոմբինատի հավաքագրման ապրատաները՝ բանուժը պլանաչափ հավաքագրելու և արտադրությանը ամրացնելու նպատակով, ավելի ուշադիր վերաբերմունք ցույց տալ յեկած բանվորներին, նրանց ընդունմանը, ծանոթացնել արտադրության հետ, և առաջին իսկ որից ապահովել սթեվանով, սնունդով և այլն:

Մատնանշելով, վոր մինչև այժմ ել թույլ և, թե անասմանափակ և թե պրոդրեսիվ պարզևատրական գործավարձի արմատացման տեմպը, պարտալորեղնել կոմբինատներին և Չակցվետմետ տրեստին միջոցներ ձեռք առնել, վոր մինչև ոգոստոսի մեկն անասմանափակ գործավարձով ընդգրկվեն աշխատանքները 80 տոկոսը և գործադրվի պրոդրեսիվ պարզևատրական գործավարձը:

Կենտկոմի և ԿԿՀ-ի միացյալ պլենումը մատնանշում և վոր չի կատարվել Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի 1931 թ. ոգոստոսի 29-ի այն վորոշումը, վորը պահանջում է հավաքագրել ու նախապատրաստել բանուժը, սրաջար մղել նրա հոսունության դեմ, կադրակերպել աշխատանքը և այլն: Այդ բացատրվում է աշխատանքի կադրակերպման կատարյալ բացակայությամբ Չանդեղուրի կոմբինատում և նրա թույլ կադրակերպմամբ Ալլահվերդու կոմբինատում: Ուստի պլենումը առաջարկում է Չակցվետմետին և կոմբինատի դիրեկտորնեին, հատուկ ուշադրություն նվիրել կոմբինատի աշխատանքի օրգաններին հավաքագրմանը:

Առաջարկել Կենտկոմի կադրերին բաժնին ու Աշխտոդկոմատին՝ տասնորում սրամադրել Չանդեղուրի կոմբինատին աշխատանքի ու եկնոմիկայի բաժնի և տեխնիկական վորումակավորման բյուրոյի աշխատանքին ծանոթ չորս աշխատող, իսկ Ալլահվերդու կոմբինատին՝ յերկու աշխատող:

7. Գտնելով վոր հետախուզական ու նախապատրաստական աշխատանքներում և շինարարության ասպարիղում առաջացած ձեղքվածքի պատճառներից մեկն է ուսցիոնալացման

ձեռնարկումներն բացակայութիւնը կոմբինատներում, առաջարկել մի ամսում իրականացնել ՀԿ (բ) Կ Կենտկոմի վորուչումը և Ձակցվեամետի դիրեկտիվները, վորոնք պահանջում են լրացնել ռացիոնալացման որգանները թե շինարարութեան մեջ և թե շահագործման ու հետախուզական նախապատրաստական աշխատանքներում: Նպատակ դնելով ե՛լ ավելի մղում տալու բանվորների լայն խավերին և ինժեներատեխնիկական աշխատողներին ռացիոնալացման ձեռնարկումներ կիրառելու ասպարիզում, առաջարկել կոմբինատներին պարզեվատրումներ կատարել նյութերի, վառելիքի և այլ առարկաների տրնտեաման համար, ոգտալործելով այդ նպատակով տրեստի ու կոմբինատները հասկացրած Փոնդը:

8. Բանվորներին ու տեխնիկական կազմին պատրաստելու ու նախապատրաստելու ասպարիզում, կոմբինատների ու տրեստի կատարած աշխատանքն ուժեղացնելու նպատակով, առաջարկել Աշխտողկոմատին, Լուստողկոմատին և Ծանր արդյունարարութեան ժողկոմատի լիազորին՝ մինչև ուսումնական տարին ապահովել Ալլահվերդու դործուսը և Յերեվանի լեռնահանքային տեխնիկումը դասատուներով: Մասնավորապես պարտավորացնել Կենտկոմի կազրերի բաժնին Յերեվանի Մանկավարժական ինստիտուտն ավարտողներէց մոբիլիզացիայի յենթարկել հինգ հոզի՝ Ղափանի ու Ալլահվերդու դործուսներում աշխատելու համար:

Հանձնարարել Յերեվանի Քաղխորհրդին՝ հանձնել Ձակցվեամետի ամբողջ շենքը Յերեվանի Լեռնամետաղածուրական տեխնիկումին:

9. Տեղական շինանյութերի հայթայթումը բարելավելու նպատակով պարտավորեցնել Հայանտատին և Հայտնարկոպին անվերսպահօրեն կատարել իրենց ստանձնած պարտավորութիւնները, ոժանդակութիւն ցույց տալով կոմբինատներին՝ տեղական շինախայտ, կրաքար և այլն պատրաստելու ասպարիզում:

Պարտավորեցնել կոմբինատներին, լայն ծավալել շինա-

արարութեան համար անհրաժեշտ շինախայտի, կրաքարի, աղյուսի և քարի սեփական մթերումը:

Անրաւարար համարելով կոմբինատում գոյութիւն ունեցող կարի ու նորոգման արհեստանոցները և մասնագիտական կոշիկի ու հաղուստի պակասը մեղմացնելու նպատակով, առաջարկել Հայանարկոպին՝ հասցնել Ալլահվերդու և Չանդեզուրի այդ արհեստանոցներն անհրաժեշտ կարողութեան, իջեցնելով կարկատելու ու նորոգելու արժեքը և լավորակ նյութ մատակարարելով արհեստանոցներին:

10. Մատնանշելով, վոր չեն կատարվել Հայաստանի Կ (բ) Կ Կենտկոմի վորուչումները և Ձակցվեամետի մի շարք կարգադրութիւնները՝ ցեխերը տնտեսաշվարկի փոխադրելու մասին, առաջարկել կոմբինատներին ավարտել բոլոր ցեխերի փոխադրումն իրական տնտեսաշվարկի: Այդ նպատակով՝

ա) արմատացնել ցեխերի խիստ միանձնյա դեկավարում, բ) ուժեղացնել ցեխերի ապարատը պլանավորողներով ու հաշվային աշխատողներով, գ) մշակել խրախուսման միջոցներ տնտեսման համար ու տույժեր գերածախսի համար ցեխերում, դ) ռացիոնալացնել հաշվառման տեխնիկան և կազմակերպել տնտեսաշվարկի պահանջներին համապատասխանող հաշվառում:

Առաջարկել Ձակցվեամետին և կոմբինատներին, հատուկ աշտրութիւն նվիրել հաշվային աշխատողների նախապատրաստմանը: Առաջարկել Աշխտողկոմատին՝ տանն որում Ղափան ուղարկել ութը հաշվային աշխատող և Ալլահվերդի ուղարկել 3 հաշվային աշխատող: Հանձնարարել կոմբինատներին՝ ապահովել հաշվային աշխատողներին բնակարաններով և սնունդի բնագավառում համապատասխան նրանց ինժեներատեխնիկական աշխատողներին:

11. Ալլահվերդու և Ղափանի պղնձահանքերի կուսկազմակերպութիւնները, զղալի աշխատանք ծավալելով կազմակերպչական-կուսակցական մաստայական աշխատանքը վերակառուցելու, պղնձի համար մղվող պայքարում իրենց շարքերի գաղափարական բայլելիկան դաստիարակութիւնն ու-

ժեղացնելու և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վերջումներն իրականացնելու ասպարիզում և այդ հիման վրա կարողանալով բարելավել շահագործական աշխատանքների քանակական ու վորակական ցուցանիշները, չեն կարողացել վճռական հաջողութուններ ձեռք բերել ստորին և միջին կուտողակների աշխատանքի վորակն ու բովանդակութունը բարձրացնելու ասպարիզում, չեն կարողացել գլխավին ընդգրկել բոլոր բանվորներին ագրիտացիոն-մասսայական ու դաստիարակչական աշխատանքով, վերացնել միանձնյա ղեկավարման սկզբունքի խախտումները և մարտական մոբիլիզացիայի յենթարկել բանվորական մասսաներին ու ինժեներատեխնիկական կազմին, սղնձարդյունաբերութան վերակառուցման կարևորագույն ճակատամարտում (հիմնական և բնակարանային շինարարութուն, յերկրաբանական-հետախույզական ու նախապատրաստական աշխատանքներ), ընկ-Մտայինի վեց սլաժաններն իրականացնելու համար:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի ու ԿԿՀ-ի միացյալ պլենումն առաջարկում և Ալլահվերդու և Ղափանի շրջկոմներին շարունակել կազմակերպչական-կուցակցական-մասսայական աշխատանքի ծավալումը, նպատակ դնելով ճիշտ բաշխել մարդկանց, ամեն կերպ ամբացնել ստորին կուտողակները և ցեխըջիշները, ընդգրկել բոլոր կոմունիստներին ու բանվորներին ագրիտ-մասսայական և դաստիարակչական աշխատանքով, բարելավել կուտակցական և բանվորական ժողովների վորակը, ներգրավել բոլոր կոմունիստներին կուտակցական-մասսայական աշխատանքին, անողք սլաժար մղելով միանձնյա ղեկավարման սկզբունքի բոլոր խախտումների դեմ և ցուցաբերելով ճիշտ ղեկավարութուն, ու մոբիլիզացիայի յենթարկելով բանվորական մասսաներին, ապահովել ընկ-Մտայինի վեց սլաժանների կենսադործումը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի ամբողջ վորոշումներին կատարումը սղնձարդյունաբերութան արժատական վերակառուցման վերաբերյալ:

ԿՈՒՏՆՏԵՍՈՒԿՈՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ

ՀամԿ(բ)Կ-ի Կենտկոմի և ԽՍՀՄ-ի ժողկոմխորհի վորոշումները՝ հացի, մսի, մրգեղենի ու բանջարեղենի միթրումները և կուտանսությունները, կուտանսականների ու մենատնտես աշխատավոր ղյուղացիները առևտրի մասին, քաղաքական բացառիկ նշանակութուն ունեն:

Այդ վորոշումները հանդիսանում են անխզելի մասը կուտակցության այն ձևերի կոմունիստների, վորոնց նպատակն և ամբացնել կուտանսությունները կազմակերպչորեն ու տնտեսապես, բարձրացնել կուտանսական ու աշխատավոր ղյուղացիության լայն մասսաների նյութական բարեկեցությունը և ել ավելի բարելավել բանմատակարարումը:

Կուտանսական առևտրին վերաբերյալ վորոշումներն ամբողջովին և լիովին բխում են կուտակցության հիմնական դժեց և հանդիսանում են կոնկրետ ձևը 17-րդ կուտակոնֆերանսի այն դիրեկտիվների իրականացման, վորոնք սլահանջում են ըստ ամենայնի ծավալել խորհրդային առևտուրը և նրա հիման վրա ղարգացնել քաղաքի ու ղյուղի ապրանքաշրջանառությունը:

Հայաստանում մսի միթերման սլանի կրճատումը 51 տոկոսով, հացի, կաթի, մրգեղենի, բանջարեղենի և ղյուղատնտեսական այլ միթերքների միթերման սլանները ղգալի կըրճատումը, յերբ միթամանակ ընդարձակվում և ցանքերի տարածությունը, լրացուցիչ հսկայական հնարավորություններ և ստեղծում մոտ ժամանակամիջոցում լայն ծավալի ղյուղացիությունների, կուտանսականների, կուտանսականների, առևտուրը:

Պլենումը պանում և, վոր կուտակցության ու կուտակության վորոշումն արտագրական յանդավառության և տնտեսական ինքնադործունեյության նոր ալիք առաջացրեց ղյուղի աշխատավոր լայն մասսաների մեջ:

Մի ղարբ ղրժաններում ՀամԿ(բ)Կ-ի Կենտկոմի և ԽՍՀՄ-ի ղյուղացիության ժողկոմխորհի վորոշումները հետևանքով, կու-

անտեսութեանն և մենատեսներն ավելացրին ցանքերի տարածութեանը, ձեռք են բերում ջահել անասուններ, աճեցնելու համար, ավելացնում են թռչունների թիվը և այլն:

Կոլտնտեսական առևտրի ծավալման ասպարիզում մեր կատարած առաջին քայլերն արդեն իսկ զգալի դրական արդյունքներ են տալիս:

Շուկայում ավելացել է գյուղատնտեսական մթերքների քանակը: Եկատելի կերպով իջել է մի շարք մթերքների գինը:

Մակայն կոլտնտեսական առևտրի ասպարիզում գոյութուն ունեցող հնարավորութեանների և խնդիրների հանդեպ, պլենումը միանգամայն անբավարար է համարում կոլտնտեսութեանների, կոլտնտեսականների և մենատնտես աշխատավոր գյուղացիների առևտրի ծավալման տեմպը:

Կոլտնտեսական շուկաները կազմակերպվել են միմիայն 7 վայրում (Յերեվան, Լենինական, Ղարաբաղի խոս, Գորիս, Ախտա, Վաղարշապատ, Թալին): Մինչև հունիսի 20-ը կազմակերպվել է ընդամենը 46 կոլտնտեսական 8 խորհրդատեսական խանութ-կրպակ:

Անթուրյատրելի չափով թույլ է զարգանում կոլտնտեսութեանների, կոլտնտեսականների և մենատնտեսների առևտուրը յերկաթուղային կայարաններում: Անբավարար է գոյութուն ունեցող կոլտնտեսական շուկաների վիճակը: Չափազանց թույլ է ընթանում կոլտնտեսականների ու մենատնտեսների առևտրի համար կառուցվող խանութների, կրպակների և ծածկերի կառուցումը: Միանգամայն անբավարար ուշադրութուն է նվիրվում շուկաներում ներքին կարգ հաստատելու հարցերին: Շուկաներում չի կազմակերպվել խորհրդատվութուն առևտրի հարցերի շուրջը: Չափազանց թույլ ուշադրութուն է նվիրվում շուկաների բարեշինութեան և նրանց սանիտարական վիճակի հարցերին:

Միանգամայն անբավարար է շուկա տանող ճանապարհների վիճակը: Չկան անասուններ պահելու և ջրելու տեղեր, մուտքեր: Չեն կազմակերպվել անասնաբուժական կետեր:

Անբավարար է շուկաների կուլտուրական - կենցաղային սպասարկումը:

Չկան թեյատներ, բուֆետներ, բուժակայաններ, լրագրային կիոսկներ, փոստային կրպակներ և այլն:

Շտորհիվ գյուղացու տների և իջեվանների անբավարար վիճակի (խորթ տարրերի բազմութունն սպասարկողների կազմում, կոպիտ վերաբերմունքը հաճախորդներին, կուլտաշխատանքի թուլութունը, կեղտոտութունն ու հակասանիտարական պայմանները, կողմնակի անձերով լցված լինելը), շուկա յեկած կոլտնտեսականներն ու մենատնտեսները չեն ապահովվում նվազագույն հարմարութեաններով (գիշերում, հանդիստ, կուլտուրական ժամանց):

Կուսակցական քաղաքային և շրջանային կոմիտեներն անհրաժեշտ չափով ուշադրութուն չեն նվիրում մասսայական քաղաքական աշխատանքների ծավալմանը կոլտնտեսական շուկաներում, գյուղացու տներում և իջեվաններում: Չկան ընթերցարաններ, չկա ուղիտ, չի կազմակերպվել իրավաբանական խորհրդատվութուն և այլն:

Այդ բոլորը վկայում են, վոր պատշաճ ուշադրութուն չի նվիրվում կոլտնտեսական շուկաները խորհրդային կուլտուրական առևտրի իրական կենտրոններ դարձնելու գործին:

Մասնանշելով, վոր հայաստանի սպառկոտպերացիան, կենտրոնի մայրաքաղաքի գլխավոր հետո, զգալիորեն բարելավվել է իր աշխատանքը, պլենումը միևնույն ժամանակ չեչտում է սպառողական, տնայնապորժական-արհեստագործական, հաշմանդամային, կոոպերացիայի և պետառևտրի միանգամայն անբավարար մասնակցութեանը կոլտնտեսական շուկաներին:

Մի ամսվա փորձը ցույց տվեց, վոր նրանք չեն կարողացել մինչև վերջը վերացնել մեքենայական բաշխման պրակտիկան և վերակառուցել իրենց աշխատանքն այն խնդիրների համաձայն, վորոնք դրել է նրանց առաջ կուսակցութունը՝ կոլտնտեսական առևտրի լայն ծավալման առնչութեամբ և

րանձատակարարման հետագա բարեկամման համար պայքար մղելու անհրաժեշտութեամբ :

Կոտայերացիան և պետառևտուրը չեն կատարել կուսակցութեան այն ուղղակի ցուցումները, վորոնք պահանջում են ավելացնել ապրանքային օճառումները, գլխավորել կուրտնտեսութեաննրի առևտուրն արդյունաբերական ու լայն գործածութեան ապրանքների հոսանքով : Նրանք չեն կատարել այն կատեգորիկ գերեկախօսքները, վորոնք պահանջում են լրիվ կատարել գյուղերն արդյունաբերական ապրանք ուղարկելու պայանները :

Կոտայերացիան և պետառևտուրը մինչև այժմ ել գեո համարյա վոչինչ չեն արել կոնկրետ ոգնութեան կողմակերպելու կուրտնտեսութեաննրին ու կուրտնտեսականնրին ժամանակավորապես կրպակներ հասկացնելու, իրենց խանութներում առևտրի համար տեղ տալու, իրենց պահեստները կուրտնտեսութեաննրին տրամադրելու ասպարիզում, վորպեսզի նրանք կարողանան պահել իրենց մթերքի չիրացված մասը և այլն : Հայկոտայի վարչութեանը, Հայառը, չրջանային սպասողական միութեանները, կոտայերացիայի ու պետառևտրի աշխատավորներին արհմիութեանները, առայժմ վոչ մի քայլ չեն արել ոգնութեան ցույց տալու գոյութեան սենցոյ կուրտնտեսական խանութներին՝ խորհրդային առևտրի տեխնիկային տիրապետելու ասպարիզում :

Պլենումն առանձնապես շեշտում է կոտայերացիայի ու պետառևտրի չափազանց թույլ մասնակցութեանը գյուղատնտեսութեան մթերքների սպառման ասպարիզում :

